



ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆՈՒՄԱՆ ՄԵԹՈԴ

Հոդվածում քննարկվում է բուհերում օտար լեզուների դասավանդման գործընթացում կիրառվող հաղորդակցական մոտեցումը որպես օտար լեզվի դասավանդման արդյունավետ մեթոդ: Հաղորդակցությունը, լինելով ուսուցման գործընթացի շարժիչ ուժ, մեծապես կարևորվում է օտար լեզվի դասավանդման ընթացքում, քանի որ զգալի կերպով նպաստում է ուսանողների ոչ միայն քերականական գիտելիքի յուրացմանը, թարգմանչական հմտությունների զարգացմանը, այլ նաև խորապես օժանդակում է նրանց բանավոր խոսքի հմտությունների ու կարողությունների, ընդհանուր լեզվամտածողության զարգացմանը:

Հիմնաբառեր. հաղորդակցական մոտեցում, շարժիչ ուժ, դասավանդման մեթոդ, գլխավոր գրավական, հայեցակարգային բնույթի դասընթացներ

JEL: Y20, Y80, Z11, Z19

Լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցումը (communicative approach) կամ մեթոդը մի միջոց է, որով հատկապես ընդգծվում է ուսուցման՝ և՛ որպես միջոցի, և՛ որպես վերջնական նպատակի կարևորությունը: Հաղորդակցական մոտեցումն առաջին անգամ ի հայտ է եկել 1970-ական թվականների վերջերին և 1980-ականների սկզբներին՝ Եվրոպայում և ԱՄՆ-ում ամենատարբեր ոլորտներում տեղի ունեցած զարգացումների արդյունքում: Օտար լեզվի ուսումնասիրության պահանջարկն այդ ժամանակ առաջնային և էական էր հատկապես Եվրոպայի համար: Եվրոպայում միջազգային շուկաների ի հայտ գալը հանգեցրեց նաև դեպի Եվրոպա կատարվող միգրացիայի (վերաբնակեցում), և, հետևաբար, բնակչության մի ստվար զանգված

կարիք զգաց և ցանկություն հայտնեց օտար լեզուներ ուսումնասիրելու, սովորելու՝ կապված անձնական նպատակների հետ¹: Միննույն ժամանակ դպրոցներում ևս սկսեցին դասավանդվել օտար լեզուներ: Միջնակարգ դպրոցների թիվը, որոնցում դասավանդում էին օտար լեզուներ, կտրուկ աճեց, և դա մեծ պահանջարկ էր վայելում 1960-1970-ականներին:

Այդ ուսուցումը համարվեց աշխարհայացքի ընդլայնման և արդիականացման գլխավոր գրավականը, և օտար լեզուների դասավանդումը դադարեց միայն բարձրակարգ և էլիտար բարձրագույն հաստատությունների մեկնաշնորհը լինելուց: Բրիտանիայում բացառիկ դպրոցներ երեխաներին մի քանի օտար լեզու սովորելու հնարավորություն էին ընձեռում²: Այսպիսով՝ հենց այս պահանջարկն էլ մեծապես խթանեց մանկավարժներին՝ մշակելու դասավանդման նոր մեթոդներ:

Դասավանդման ավանդական՝ քերականական, թարգմանչական հմտությունների վրա հիմնված մեթոդները ենթադրում էին, որ, ի վերջո, սովորողը կվարպետանա օտար լեզվի քերականության կամ ուսումնասիրվող լեզվից մայրենի լեզվի թարգմանության մեջ, սակայն երկար ժամանակ և ջանքեր պահանջվեցին, որ օտար լեզուները կիրառվեն նաև իրական կյանքում և առօրյայում: Ամեն դեպքում այս ուսումնասիրությունները վերաբերում էին հասուն տարիքում լեզու ուսումնասիրողներին, ովքեր զբաղվում էին աշխատանքով, և դպրոցներին, որոնք իրականում դեռ այնքան էլ պատրաստ չէին տրամադրելու թե՛ տեսական գիտելիք, թե՛ գործնական հմտություններ ու կարողություններ: Եվ, ինչպես նշում է Վոնգը, մանկավարժները հասկացան, որպեսզի բարձրացվի իրենց բոլորի շահադրժման աստիճանը, հրատապորեն անհրաժեշտ է շատ արդյունավետ մեթոդ³, որն էլ հենց հաղորդակցական մոտեցումն էր: Այս առաջադեմ գաղափարն էլ դրդում էր մանկավարժներին, որպեսզի փոփոխեն իրենց դասավանդման ձևերն ու հնարները:

Առաջադիմական գաղափարախոսությամբ պաշտպանվում էր այն տեսակետը, որ ակտիվ ուսուցման մեթոդն ավելի արդյունավետ էր, քան պասիվը⁴: Այդ ժամանակահատվածում տվյալ ինտերակտիվ (փոխգործուն) մեթոդը փորձաշրջան էր անցնում դպրոցներում և համալսարաններում, որտեղ սովորողները շատ ակտիվ կերպով ներգրավվում էին դասաժամի ընթացքի մեջ՝ խմբակային աշխատանքների միջոցով: Օտար լեզվի դասավանդումն, իհարկե, բացառություն չէր, և մանկավարժները սկսեցին նոր ձևեր փնտրել ու մշակել այս մեթոդը՝ գործնականում կիրարկելու համար:

Այսպիսով՝ օտար լեզվի դասավանդման առաջնային փուլում հատկանշական է այն փաստը, որ լեզվի ուսուցումը հիմնված է իմացական և ճանաչողական մոտեցման վրա: Այնուհետև այն վերափոխվում է սոցիալական ճանաչողական միջոցի, որն ընդգծում է, որ լեզուն կարող է հեշտորեն ուսուցանվել ամենօրյա մարդկային շփման միջոցով: Այնուամենայնիվ, այսօր հաղորդակցական մոտեցման շնորհիվ լեզուներ դասավանդելու գործընթացը դարձել է պարտադիր երևույթ:

¹ Տե՛ս **Richards & Rodgers**, *Approaches and Methods in Language Teaching*, 2001, էջ 153–155:

² Տե՛ս **Mitchell**, *Narrative, Memory and Slavery*. In *Cultural Artifacts and the Production of Meaning: The Page, the Image, and the Body*. Edited by Margaret J. M. Ezell, Katherine O'Brien O'Keefe. Ann Arbor, MI: U of Michigan P, 1994, էջ 33–35:

³ Տե՛ս Whong, *Language Teaching: Linguistic Theory in Practice*. Edinburgh University Press, 2011, էջ 129–134:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 129–134:

Հաղորդակցական մոտեցման կամ մեթոդի զարգացումը նաև հարստացավ համալսարանական (ակադեմիական) գաղափարներով: Բրիտանիայում լեզվաբանները սկսեցին կասկածել այս մոտեցման արդյունավետության մեջ, որն, ի դեպ, այդ ժամանակ համարվում էր դասավանդման գերակա մեթոդ: Սա մասամբ պատասխան-բողոք էր Խոմսկու⁵ լեզվի մասին ունեցած հայացքներին: Ըստ վերջինիս՝ լեզվի կառուցվածքային տեսությունները, որոնք գերիշխող էին այդ ժամանակ, չէին կարող բացահայտել այն ստեղծարարությունը և բազմազանությունը, որն ակնհայտ էր հաղորդակցական մեթոդում: Ի լրումն, բրիտանացի լեզվաբաններ Քրիստոֆեր Քենդլինը և Հենրի Վիդոուսոնը արտահայտեցին այն տեսակետը, որ կառուցվածքի վրա կենտրոնացումը բնավ չէր օգնում օտար լեզու ուսումնասիրող և սովորող ուսանողներին: Նրանք ևս անհրաժեշտություն զգացին՝ զարգացնելու հաղորդակցական հմտությունները և հատկապես գործառնության կարողությունները⁶:

ԱՄՆ-ում լեզվաբան և մարդաբան Դեյլ Հայմսը զարգացրեց հաղորդակցական կարողությունների գաղափարը, որը հակադեցություն էր Խոմսկու՝ որպես լեզվաբանության կատարյալ բանախոսի գաղափարին: Հաղորդակցական կարողությունները, «որոշակի լեզվով ազատ խոսելը» բնորոշ են միայն լեզվակիրներին (native speakers), ովքեր ենթագիտակցորեն արդեն տիրապետում են լեզվի տարրերին և, համաձայն հաղորդակցական հմտությունների, ունակ են սոցիալական իրավիճակներում պատշաճ կերպով օգտագործելու լեզվական տարբեր կառույցներ: Այս ամենը նրբանկատ և դիպուկ ձևով ամփոփված է Հայմսի աշխատանքներում: Ըստ նրա՝ գոյություն ունեն որոշակի լեզվական օրինաչափություններ, առանց որոնց քերականական կանոններն անիմաստ կլինեին⁷:

Այսպիսով՝ Եվրոխորհրդի համար կրթությունն առաջնային էր, ուստի ծրագիր մշակվեց՝ բոլոր վերաբնակիչների կարիքները բավարարելու համար: Այս մշակումների ընթացքում կարևորվեցին տարբեր մոտեցումներ, որոնք ավելի արդյունավետ էին համարվում, քան քերականական և բառարանային ավանդական միջոցները: Այս հայեցակարգային բնույթի դասընթացները ներառում էին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ ժամանակը, տեղակայումը, քանակը, հաճախականությունը, իսկ գործառնությանը՝ հաղորդակցական գործողությունները, ինչպես օրինակ՝ առաջարկները, բողոքները, մերժումները և խնդրանքները: Ծրագիրը շատ լայն գործածություն ստացավ⁸:

Լեզվի դասավանդման հաղորդակցական մեթոդը զարգացավ նաև Գերմանիայում: Այդ ժամանակահատվածում Գերմանիայի կրթական համակարգում հատկապես կարևորվում էր անձի ազատությունը: Այս նպատակին հասնելու համար մանկավարժները նյութեր մշակեցին, որոնք հնարավորություն էին տալիս լեզու ուսումնասիրողներին ազատ ընտրություն կատարելու, թե ինչի մասին զրուցեն և ինչպես շփվեն միմյանց հետ: Այս նյութերի հիմքում տարբեր սոցիալական ոլորտներն էին, որտեղ առկա էր որոշակի քերականական նյութ՝ կառուցված այնպես, որ օգներ սովորողներին առաջընթաց ունենալու այդ դասընթացի միջոցով: Նյութը օգտագործվում էր նաև մանկա-

⁵ Տե՛ս Richards, Rodgers, նշվ. աշխ., էջ 153–155:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս Mitchell, նշվ. աշխ., էջ 33–35:

⁸ Տե՛ս Richards, Rodgers, նշվ. աշխ., էջ 153–155:

վարժների վերապատրաստման ժամանակ՝ օգնելով նրանց սահուն կերպով անցում կատարելու նոր հաղորդակցական ծրագրերի միջոցով դասավանդման:

Հաղորդակցական մեթոդը սովորաբար բնութագրվում է որպես ուսուցման նկատմամբ գոյություն ունեցող մոտեցում, քան դասավանդման մեթոդ, որը լսարանում գործադրվող հստակ սահմանված մեթոդների ամբողջություն է: Իբրև այդպիսին՝ այն համարվում է որոշակի ընդհանուր սկզբունքների և առանձնահատկությունների շարք, որտեղ առանձնանում են Դեյվիդ Նյունանի առաջարկած հաղորդակցական մոտեցման ուսումնասիրման հինգ առանձնահատկությունները⁹: Դրանք ստեղծվել են հաղորդակցական մեթոդն օգտագործողների կողմից՝ ցույց տալու համար, որ իրենք շատ հետաքրքրված են իրենց ուսանողների կարիքներով և ցանկություններով, քանի որ լեզուն ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային գործածություն ունի:

Դասավանդման ցանկացած միջոց, որը նպաստում է ուսանողների՝ իրական ենթատեքստում հաղորդակցական ունակությունների զարգացմանը, համարվում է ընդունելի, արդյունավետ և շահավետ:

Այսպիսով՝ լսարանում հաղորդակցական մեթոդը հաճախ զույգերով կատարվող կամ խմբակային աշխատանք է, որը պահանջում է բանակցային և համագործակցային հմտություններ, որոնք հիմնված են լեզվի սահունության վրա և խրախուսում են սովորողներին՝ զարգացնելու իրենց ինքնավստահությունը, նաև դերերով խաղեր, որոնք զարգացնում են լեզվական հմտությունները, ինչպես և քերականության ու արտասանության վրա հիմնված կարողությունները, ընդհանուր առմամբ՝ լեզվամտածողությունը: 1990-ականների կեսերին տարբեր մոտեցումներ ազդեցություն ունեցան լեզվի դասավանդման գործընթացի վրա, և կարծիքներ հայտնվեցին, որ տպագրված նյութերը կարող են ճնշել հաղորդակցական մեթոդը: Որպես այդպիսին՝ նման մոտեցումների նպատակը իրական հաղորդակցման վրա կենտրոնանալն է, քանի որ հաղորդակցությունը ուսուցման գործընթացի շարժիչ ուժն է:

Լսարանային գործողությունները, որոնք առկա են այս մեթոդի կիրառության ժամանակ, հետևյալն են՝ դերերով խաղեր, տեղեկությունների հաղորդում և փոխանակում, հարցազրույցներ, լեզվական փոխառությունների վերլուծություն, զույգերով աշխատանք:

Երբեմն կատարվում են պարբերաբար կրկնվող քերականական նյութի յուրացումը գնահատելու և տնային աշխատանքի ստուգումներ: Շատ կարևոր հանգամանք է մանկավարժի՝ ուսանողին ձայնի իրավունք տալը՝ հատկապես մեր օրերում առկա կրթական համակարգի պայմաններում, երբ բուհերում սահմանված է ուսուցման ուսանողակենտրոն մոտեցում¹⁰:

1985 թվականին «Անգլերենի դասավանդման ամսագրում» (English Language Teaching Journals) Մայքլ Սվանը կազմակերպեց հաղորդակցական մեթոդի դեմ ուղղված հզոր գրոհներից մեկը¹¹: Հենրի Ուիդդուսոնը պաշտպանական պատասխան տվյալով հանդես եկավ հենց նույն ամսա-

⁹ Տե՛ս **Nunan**, Language teaching methodology. London: Prentice Hall International, 1991:

¹⁰ Տե՛ս **Amber Simmons**, Motivating Students through Power and Choice. English Journal 100 (1), September, 2010, էջ 65–59:

¹¹ Տե՛ս **Swan Michael**, In the English Language Teaching Journal, 1985, 39(1), էջ 2–12, 39(2)՝ էջ 76–87:

գրում¹²: Նրա օրինակին հետևեցին նաև այլ հեղինակներ¹³, որոնք նույնպես քննադատեցին հաղորդակցական մեթոդը¹⁴:

Այսպիսով՝ կարծում ենք՝ հաղորդակցական մեթոդը կարելի է հաջողված և արդյունավետ համարել, քանի որ դասավանդողը հիմնականում հասկանում է ուսանողի նպատակները: Եթե դասավանդողը և ուսանողը նույն լեզվի կրողներն են, ապա առաջինը շատ ավելի արագ է նկատում ուսանողի բոլոր սխալներն ու վրիպումները, քանի որ իսկույն հասկանում, գիտակցում է, որ դրանք լեզվական ինտերֆերենցիայի հետևանք են¹⁵:

Օգտագործված գրականություն

1. Richards & Rodgers, *Approaches and Methods in Language Teaching*, 2001.
2. Mitchell, *Narrative, Memory and Slavery*. In *Cultural Artifacts and the Production of Meaning: The Page, the Image, and the Body*. Edited by Margaret J. M. Ezell, Katherine O'Brien O'Keeffe. Ann Arbor, MI: U of Michigan P, 1994.
3. Whong, *Language Teaching: Linguistic Theory in Practice*. Edinburgh University Press, 2011.
4. Nunan, *Language teaching methodology*. London: Prentice Hall International, 1991.
5. Amber Simmons, *Motivating Students through Power and Choice*. *English Journal* 100 (1), September 2010.
6. Swan Michael, *In the English Language Teaching Journal*, 1985, 39(1), 39(2).
7. Bax S., *The end of CLT: a context approach to language teaching* *ELT J* 2003, 57.
8. Harmer J., *Popular culture, methods, and context* *ELT J* 2003, 57.
9. Hattum, *The Communicative Approach Rethought*, 2006.

¹² Տե՛ս նույն տեղը, 1985, 39 (3), էջ 158–161:

¹³ Տե՛ս **Bax S.**, *The end of CLT: a context approach to language teaching* *ELT J*, 2003, 57, էջ 278–287:

¹⁴ Տե՛ս **Harmer J.**, *Popular culture, methods, and context* *ELT J* 2003, 57, էջ 288–294:

¹⁵ Տե՛ս **Hattum**, *The Communicative Approach Rethought*, 2006:

КРИСТИНЕ САРГСЯН

Преподаватель кафедры “Языков” в АГЭУ

Коммуникативный подход как метод обучения иностранному языку.– В данной статье рассматривается коммуникативный подход как метод обучения иностранному языку, который широко используется в качестве эффективного метода обучения иностранным языкам. Являясь движущей силой в процессе обучения и преподавания иностранных языков, коммуникация очень важный фактор, так как она в значительной степени способствует не только улучшению грамматических знаний студентов, развитию навыков перевода, а также способствует улучшению их устных и речевых навыков и пониманию языка в целом.

Ключевые слова: *коммуникативный подход, движущая сила, метод преподавания, главный залог, концептуальные курсы обучения.*

JEL: Y20, Y80, Z11, Z19

KRISTINE SARGSYAN

Lecturer at the Chair of “Languages” at ASUE

Communicative Approach as a Foreign Language Teaching Method.– This article discusses the communicative approach as a foreign language teaching method which is widely used as an effective method in the foreign language teaching process. Communication is highly important as an impetus in the learning process of teaching a foreign language as the method significantly contributes to the students’ not only, upgrading their grammatical knowledge, the development of their translation skills but also strongly supports the enhancement of their oral speech skills and abilities as well as language awareness on the whole.

Key words: *communicative approach, impetus, teaching method, the main pledge, conceptual classes.*

JEL: Y20, Y80, Z11, Z19